

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

32



АППАРАТ МИНИСТЕРСТВА
ОХРАНЫ ПРИРОДЫ И
ПРИРОДНЫХ РЕСУРСОВ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ
ГОСУДАРСТВЕННАЯ ИНСПЕКЦИЯ ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР

(0479) 7-05-44

☒ ք.Ստեփանակերտ, փող. Ա.Առաքելյան 14-գ ☎ ☒ ք. Степанакерт, ул. А.Аракелян 14-г

ՈՐՈՇՈՒՄ N 32

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք.Ստեփանակերտ

«23» հուլիսի 2019 թ.

Ես՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տնտեսության պետի պաշտոնակատար Ռաֆիկ Վլարթի Մաթևոսյանս, քննելով 2019թ. հուլիսի 22-ին ջրօգտագործման թույլտվության կանոնների խախտման փաստով «Ալֆամագ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Հակոբ Աղասի Մաթիլյանի նկատմամբ N 25 առ 08.07.2019թ. որոշմամբ հարուցված վարչական գործը, համաձայն նախարարի թիվ 10 Ա առ 07.02.2019թ. հրամանի և տնտեսության պետի N 16 առ 07.06.2019թ. հանձնարարագրի կատարված ստուգումների արդյունքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացված ստուգումների արդյունքներով կազմված N 23 առ 10.06.2019թ. ստուգման ակտ, ինչպես նաև այլ նյութերը.

Պարզեցի

«Ալֆամագ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Հ.Ա.Մաթիլյանը բացատրություն է տվել, որ նախարարության կողմից թիվ 1.5-5/266 առ 07.02.2019թ. և 1.5-5/1017 առ 13.05.2019թ. ուղարկված գրությունների պահանջները, որ «Սյունիք 3» ՓՆԸ-ի ջրառի կետերում ապահովել ջրաչափական դիտակետով, չի կարողացել տեղադրել տեխնիկական պատճառներից ելնելով ու հետագայում նրան հնարավորություններ ստեղծվեն այդ դեպքում հարցին լուծում կտրվի: Բացի դրանից, ընկերության կողմից նախարարությանը չի ներկայացրել ջրառի ծավալների

հաշվառման համար բնապահպանական և բնօգտագործման վճարների վերաբերյալ հաշվետվություն:

Վերոնշյալ նրկու դեպքերով ընկերության կողմից խախտվել է N ԲՌ-147 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի առաջին և երկրորդ ենթակետերի պահանջները, այսինքն՝ նրա արարքում առկա են «Վարչական Իրավախախտման վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 63²-րդ հոդվածի 2-րդ մասի և 169⁴-րդ հոդվածի հատկանիշներ:

Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ԼՂՀ օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի և 63²-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների՝

ՈՐՈՇԵՑԻ


1. «Ալֆամագ» ՓԲԸ-ի տնօրեն՝ Ն.Ա.Մաթևոսյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել 200000 (նրկու հարյուր հազար) ՀՀ դրամ գումարով վարչական տուգանք:

Սույն որոշումն ստանալուց հետո, 15 օրվա ընթացքում խախտում թույլ տվող անձը պարտավոր է նշված գումարը փոխանցել Արցախի Հանրապետության պետական բյուջե՝ խումբ 24, ենթախումբ 6 915005240618/52 հաշվարկային հաշվին:

2. Տուգանքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության աշխատակազմի բնապահպանական և ընդերքի պետական տնտեսություն՝ հետևյալ հասցեով՝ ք. Ստեփանակերտ Ա. Առաքելյանի 14-Գ:

3. ԱՀ Բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարին ներկայացնել միջնորդություն «Սյունիք 3» ՓՎԷԿ-ի ջրօգտագործման թույլտվության գործնության կասեցման վերաբերյալ՝ մինչև N ԲՌ-147 ջրօգտագործման թույլտվության 13-րդ կետի պահանջների ապահովումը:

Արցախի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 287 և 288 հոդվածների համաձայն, սույն որոշումը կարող է բողոքարկվել վերադաս մարմին(վերադաս պաշտոնատար անձին) կամ դատական կարգով՝ որոշումն ընդունելու օրվանից 10 օրվա ընթացքում:



Պետի պաշտոնակատար

Ռ.Վ.Մաթևոսյան